ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» --------- 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2015 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.451-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.87՝ 62.3 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման. հ.27102015-01-0284 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Լուսինե Խաչատրյանին, Սեդրակ Աղեկյանին և Տաթև Աղեկյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.87՝ 62.3 քմ մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Լուսինե Խաչատրյանին, Սեդրակ Աղեկյանին և Տաթև Աղեկյանին։

Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.87՝ 62.3 քմ մակերեսով բնակարանը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.27102015-01-0284 վկայականի տվյալների՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը։

Քաղաքացի՝ Լուսինե Խաչատրյանը և նրա երկու անչափահաս երեխաներ՝ Սեդրակ Աղեկյանը և Տաթև Աղեկյանը հանդիսանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի հ.33651 զորամասի գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Արտակ Սեդրակի Աղեկյանի ընտանիքի անդամները։ Վերջինս, 2015 թվականի փետրվարի 28-ին հակառակորդի դիվերսիոն գործողությունների արդյունքում զոհվել է։ Արտակ Աղեկյանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Հայաստանի Հանարապետության պաշտպանության նախարարության և Հայասատանի Հանրապետության Նախագահի կողմից պարգևատրվել է մարտական ծառայության բազմաթիվ մեդալներով։

Արտակ Սեդրակի Աղեկյանի ընտանիքը, այրին՝ Լուսինե Խաչատրյանը, տղան՝ Սեդրակ Աղեկյանը և աղջիկը՝ Տաթև Աղեկյանը վարձով բնակվում են Մազմանյան փողոցի հ.5/9 շենքի հ.17 բնակարանում և գտնվում են սոցիալապես անբարենպաստ պայմաններում /հիմք՝ «Բաշինջաղյան 198» համատիրության 13.01.2016թ. հ.0-04 տեղեկանք/։ Ընտանիքը հանդիսանում է բնակարանային պայմանների խիստ կարիքավոր։

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը միջնորդություն է ներկայացրել զոհվածի ընտանիքին բնակարանով ապահովելու վերաբերյալ։

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Լուսինե Խաչատրյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև որևէ անշարժ գույքի նկատմամբ օտարում և ձեռքբերում չի եղել։

Հաշվի առնելով Արտակ Աղեկյանի անձնանվեր ավանդն երկրի պաշտպանության գործում, ինչպես նաև նրա ընտանիքի բնակարանային պայմանների խիստ կարիքավորությունը, առաջարկվում է Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.87 բնակարանն անհատույց օտարել (նվիրել) վերջինիս ընտանիքին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ